



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 07 » 06 2021թ.

№ 08/ԼԱ/ - 399

2021թ. մայիսի 31-ից հունիսի 6-ին դիտված հիդրոօդերևութաբանական պայմանները ՀՀ-ում

Մայիսի 31-ը, հունիսի 1-4-ին դիտվել է առանց տեղումների եղանակ: Հունիսի 5-6-ին առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Տաշիրում՝ 33մմ, Պուշկինի լճ. -ում և Օձունում՝ 20մմ, Ստեփանավանում՝ 19մմ, Իջևանում՝ 18մմ, Բագրատաշենում՝ 15մմ, մնացած շրջաններում մինչև 7մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մայիսի 31-ին, հունիսի 3-ին նորմայից բարձր է եղել 3-5, հունիսի 1-2-ին՝ 5-7, հունիսի 4-ին՝ 1-2 աստիճանով, հունիսի 5-6-ին եղել է նորմայի սահմաններում՝ դրական և բացասական շեղումներով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +32...+38°C, նախալեռնային շրջաններում՝ +28...+29°C, Արմավիրում՝ +36°C, Արարատում՝ +35...+36°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +30...+35°C, լեռնային շրջաններում՝ +24...+25°C, Վայոց Ձորի՝ լեռնային շրջաններում՝ +25°C, նախալեռնային շրջաններում՝ +35°C, Տավուշում՝ +28...+31°C, Շիրակում՝ +24...+29°C, Կոտայքի՝ լեռնային շրջաններում՝ +26...+28°C, նախալեռնային շրջաններում՝ +32°C, Լոռիում՝ +26...+30°C, Գեղարքունիքում՝ +23...+26°C, Երևան քաղաքում՝ +34...+36°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +10...+13°C, լեռնային շրջաններում՝ 0...+2°C, Շիրակում՝ +2...+4°C, Լոռիում՝ +1...+6°C, Գեղարքունիքում՝ +3...+7°C (Գավառում՝ +1°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +5...+6°C, նախալեռնային շրջաններում՝ +11°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +4°C, նախալեռնային շրջաններում՝ +13°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +14...+18°C, նախալեռնային շրջաններում՝ +7...+11°C, Արմավիրում՝ +12°C, Տավուշում՝ +10...+12°C (Դիլիջանում՝ +4°C), Արարատում՝ +10...+14°C, Երևան քաղաքում՝ +10...+13°C:

Հունիսի 5-ին Վանաձորում, Գյումրիում, Տաշիրում դիտվել է կարկուտ՝ 40մմ, 7մմ և 6մմ, 6-ին՝ Իջևանում և Օձունում՝ 12մմ և 10մմ տրամագծով:

Հունիսի 5-ին Արմավիրում և Ապարան լճայինում դիտվել է քամու ուժգնացում՝ պողոթկումները մինչև 25մ/վ արագությամբ, շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է քամի՝ 5-15մ/վրկ, պողոթկումները՝ մինչև 16-24 մ/վրկ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում եղանակային պայմանները նպաստավոր էին մշակաբույսերի աճի և զարգացման, ինչպես նաև աշխատանքների կատարման համար, միայն 05-06-ին դիտվել է կարկուտ: Վանաձորում (Ձորագյուղ, Արևածագ համայնքներում) վնասվել են ցորենի և կարտոֆիլի ցանքատարածությունները, կոտրվել պտղատուների ճյուղերը, իսկ Տաշիրում, Գյումրիում, Օձունում և Իջևանում վնասներ չի գրանցվել:

Լեռնային շրջաններում կարտոֆիլը ծլել է, նախալեռնային շրջաններում առաջացել են կողային ընձյուղները, Օձունում՝ ծաղկաբույլերը, պտղատուների մոտ տեղի է ունենում պտղի ձևավորում, հովտային շրջաններում՝ հասունացում:

Մերձավանում բազմամյա միջին արժեքներին մոտ դիտվել է աշնանացան ցորենի կաթնային հասունացում, մնացած հովտային և որոշ նախալեռնային շրջաններում աշնանացանը գտնվել է ծաղկման փուլում:

Մերձավանում բազմամյա միջին արժեքներին մոտ կատարվել է առվույտի առաջին խոտհունձ:

Մայիսի 31-ից հունիսի 6-ը հանրապետության գետերում ջրի ելքերի բնական էական փոփոխություններ չեն դիտվել: Մայիսի 6-ին հանրապետության առանձին գետերում դիտվել է ջրի ելքերի որոշ մեծացում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 1 սմ-ով (30.05-06.06.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.91մ (06.06.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 11 սմ-ով:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար



Լ.Ագիգյան

Տնօրենի տեղակալ Գ.Սուրենյան
Հեռ.՝ 012 31 79 21